# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Ֆիոլետովո համայնքի ավագանու արտահերթ նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Ֆիոլետովո** | Ավագանու արտահերթ նիստ | 09.02.2021թ. | 12:30 | **Ֆիոլետովոյի** ավագանու նիստերի դահլիճ (գ.Ֆիոլետովո 1 փ.146) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. Փետրվարի 9-ին՝ ժամը 12.30-ին Ֆիոլետովոյի ավագանու նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

**ժամը՝ 12.30**

1. Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ. Փետրվարի 9-ի նիստի օրակարգը հաստատելու համար

զեկ. Ա.Աբրահամյան

2. Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակիցների և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.Վ.Նովիկովա

3. Ֆիոլետովո համայնքի 2021 թվականի ճշտված բյուջեն հաստատելու մասին:

զեկ.Վ.Նովիկովա

**ՆԱԽԱԳԻԾ 01**

---

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2021թ-ի փետրվարի 09-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆիոլետովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակիցների և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
2. Ֆիոլետովո համայնքի 2021 թվականի ճշտված բյուջեն հաստատելու մասին։
3.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
*ԳԱՅԱՆԵ ԲՈԶՈՒԿՅԱՆԸ*

**ՆԱԽԱԳԻԾ 02**

---

ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *Նովիկովա Վալենտինա*

Ղեկավարվելով ՙՏեղական ինքնակառավարման մասին՚ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերի, ''Նորմատիվ իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին

1. Հաստատել Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-2 հավելվածների.

2. Ուժը կորցրած ճանաչել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 21 որոշման NN 1-2 հավելվածները
3. Սույն որոշման ուժի մեջ է մտնում 2021 թվականի փետրվարի 10-ից.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
*ԳԱՅԱՆԵ ԲՈԶՈՒԿՅԱՆԸ*

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՃՇՏՎԱԾ
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ*

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,, Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի 2021թ. ճշտված բյուջեն:

1. Եկամուտների գծով

Ընդամենը - երեսուն ինը միլիոն երկեւ հարյուր երկու հազար ութ հարյուր դրամ

- վարչական բյուջեի մասով-երեսուն ինը միլիոն երկեւ հարյուր երկու հազար ութ հարյուր դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով- զրո դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը -վաթսուն վեց միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր դրամ

- Վարչական բյուջեի մասով -երեսուն ինը միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով- քսանյոթ միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր դրամ
-

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
*ԳԱՅԱՆԵ ԲՈԶՈՒԿՅԱՆԸ*